ԳՐԻԳՈՐ ԿԹՂ. ԱՂԹԱՄԱՐԻ.— (1586-1612?) ըստ Յովսէփ գրչի կը կոչուի Փոքր Գրիգորիս. հայրը՝ Պարոն Սեդին, մայրը Ղրիմ Խաթուն, եղբայրները՝ Պարոն Խէտէն, Սմբատ, Զաքարիա եպս. և Պարոն Իսքընտար. քոյրը Մարգարիտ Խաթուն: Նոյն գրչի յիշատակարանին համաձայն, Գրիգորիս կթղ. ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, 1602էն յառաջ. ըստ այս յիշատակարանի. «. . . եւ յետոյ գնաց յԵրուսաղէմ երկոտասան արամբք վարդապետօք և կրօնաւորօք. զի միայն եղբայրն էր ի հետն, աղգական Պարոն Խէտէն և այլ բազում աղքատ կերակրէր ի ճանապարհին . . .» «. . . եւ յետոյ դարձաւ յԵրուսաղէմայ և բերեալ ընծայ սուրբ խաչին զարբաֆ շուրջառ մի հանդերձիւ» և այլն. (Հա. 1920. էջ 22-23):

ԳՐԻԳՈՐ ԿԹՂ. ՊԱՀԼԱՒՈՒՆԻ.— Գրիգոր կթղ. Վկայասէրի թոռը. Ապիրատ Ծովքեցի իշխանին զաւակը և երէց եղբայր Ներսէս Շնորհալիի. կը վարէ Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը 1113-1166) նախ Ծովքի մէջ, յետոյ Հռոմկլայ. իր կեանքի և գործերու մասին դիմել Հայ. Եկեղց. Պատմութեան: 1141ին Անտիոքի մէջ ժողով մը կը գումարուի պապական նուիրակ Ոսոիոյ կարդինալ Ալբերիկոսի նախագահութեամբ. դատելու համար Անտիոքի լատին պատրիարք Հռոտոլփոսի արարքները: Յատուկ հրաւիրմամբ, սոյն ժողովին ներկայ կ'ըլլան Գրիգոր կթղ. Պահլաւունի և եղբայրը Ս. Ներսէս Շնորհալի: Հռոտոլփոս կը դատապարտուի. ժողովէն յետոյ Ալբերիկոս փափաք կը յայտնէ Գրիգորիս կթղ.ին միասին ուխտ կատարել Երուսաղէմ. Պահլաւունին թէ՛ իր ուխտը կատարելու և թէ լատինաց հետ իր յարաբերութիւնները ամրապնդելու համար, կ'ընդունի նոյն առաջարկը ու 1142ի Զատկին Երուսաղէմ կը գտնուի եւ կը նախագահէ հանդիսութեանց. կը մասնակցի Սիոնի մէջ գումարուած ժողովին, ուր ատենաբանութեամբ մը կը պարզէ Հայ Եկեղեցւոյ հաւատալիքը և դաւանութիւնը. ընդհանուրին հաւանութեան և ակնածանքին կ'արժանանան կթղ.ին խօսքերը և լատինք սիրով կը վերաբերուին հանդէպ Հայ Եկեղեցւոյ և Ս. Յակոբի միաբանութեան: Մեր պատմիչներէն Սամուէլ Անեցի կը յիշէ Գրիգորիս կթղ.ին այս այցելութիւնը. իսկ օտարներէն Տիւրացի Գուլիէլմոս հետևեալ կերպով կ'արտայայտուի Գրիգորիսի մասին. «Մեծ հայրապետ Հայոց, գլուխ և պետ ամենայն եպիսկոպոսաց Կա-